Պատմության օլիմպիադայի մարզային փուլի (2025-2026 ուստարի) 9-րդ դասարանի թեստի

## Պատասխաններ

| Հարցի համար | Ճիշտ պատասխան |
|---|---|
| 1 | 3 |
| 2 | 3 |
| 3 | 3 |
| 4 | 2 |
| 5 | 1 |
| 6 | 3 |
| 7 | 1 |
| 8 | 4 |
| 9 | 2 |
| 10 | 2 |
| 11 | ա, գ, ե |
| 12 | դ, ե, է |
| 13 | գ, դ, զ |
| 14 | 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ |
| 15 | 1. **Ս. Վրացյան**,<br>2. **Ա. Խատիսյան**,<br>3. **1920 թ. նոյեմբերի 30-ին**,<br>4. **1920 թ. դեկտեմբերի 2-ին**,<br>5. **Ալեքսանդրապոլում** |
| 16 | *Պատասխանները չեն սահմանափակվում ներքոհիշյալներով: Աշակերտները կարող են գրել ուրիշ ճիշտ տարբերակներ: Պետք է ընդունել ցանկացած երկու ճիշտ պատասխան:*<br><br>**Պատճառ:** 1. Տարածքային: Աշխարհի գաղութային բաժանման ավարտից հետո պայքար ծավալվեց ազդեցության ոլորտների և տարածքների վերաբաժանման համար:<br>2. Տնտեսական: Արդյունաբերական զարգացած երկրները ձգտում էին ապահովել տնտեսական և ֆինանսական գերազանցություն իրենց հակառակորդների նկատմամբ:<br>3. Ռազմական: Մեծ տերությունների միջև ծավալվեց սպառազինությունների մրցավազք՝ նպատակ ունենալով ռազմական առումով հասնելու գերազանցության հակառակորդների նկատմամբ:<br>4. Գաղափարական: Մեծ տարածում գտան ազգայնամոլությունը և կայսերապաշտությունը: Տերությունների իշխող վարչակարգերը քարոզում էին ատելություն, թշնամանք այլ ազգերի նկատմամբ, կատարում պատերազմի գաղափարական նախապատրաստում:<br>**Հետևանք:** 1. Մեծ էր մարդկային զոհերի թիվը: Միայն մասնակից երկրների զինված ուժերը տվեցին մոտ 10 միլիոն սպանված, 20 միլիոնն էլ վիրավորվեց և խեղանդամ դարձավ: |

| | |
|---|---|
| | 2. Ցեղասպանությունների, սովի և համաճարակների զոհ դարձան թիկունքի 10 միլիոնից ավելի խաղաղ բնակիչներ։<br>3. Պատերազմող երկրներն ունեցան հսկայական նյութական կորուստներ։<br>4. Պատերազմը խթանեց ռազմական արդյունաբերության և գիտության ու տեխնիկայի զարգացումը։ Կատարելագործվեց ռազմարվեստը։<br>5.Պատմության թատերաբեմից հեռացան Ավստրոհունգարական, Ռուսաստանյան, Օսմանյան և Գերմանական կայսրությունները։<br>6. Չորս նախկին կայսրությունների տարածքում առաջացան նոր բազմաթիվ ազգային պետություններ։<br>7. Բազմաթիվ երկրներում տեղի ունեցան նաև ժողովրդավարական հեղափոխություններ, որոնց արդյունքում տապալվեց կառավարման միապետական ձևը, տարածվեց ժողովրդավարությունը։ |
| **17** | **1.** Դրվագ Բրեստ-Լիտովսկի բանակցություններից, որոնք ընթացել են Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ դաշինքի միջև։<br><br>**2.** Բանակցություններն ընթացել են 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մարտ Բրեստ-Լիտովսկում։<br><br>**3.** Բանակցությունների արդյունքում Բրեստ–Լիտովսկում ստորագրված հաշտության պայմանագրով 1) Ռուսաստանը հրաժարվեց Լեհաստանից, Ուկրաինայից, Բելառուսի մեծ մասից, Մերձբալթիկայից։ 2) Բացի այդ՝ նա պետք է վճարեր խոշոր ռազմատուգանք։ 3) Գերմանիայի աջակցությամբ պայմանագրում տեղ գտան նաև Թուրքիայի պահանջները։ Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերն անհապաղ դուրս բերել Արևմտյան Հայաստանից և Իրանից։ 4) Ավելին՝ նա հանձն էր առնում նաև Թուրքիային վերադարձնել Կարսը, Արդահանը և Բաթումը։ *(Կարող է լինել ուրիշ ճիշտ պատասխան)* |
| **18** | **1**. Եկեղեցական գույքի բռնագրավման մասին օրենք։ 1903 թ. հունիսի 12<br><br>**2**. (1) Մկրտիչ Խրիմյանը հրահանգում է ոչինչ չհանձնել ռուս պաշտոնյաներին։<br>(2) 1903 թ. հուլիսի վերջից սկսվում են ժողովրդական ցույցեր՝ Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում, Նախիջևանում, Թիֆլիսում և այլուր։<br>(3) 1903 թ. հոկտեմբերին հնչակյանները մահափորձ են կազմակերպում Գոլիցինի դեմ։ *(Կարող է լինել ուրիշ ճիշտ պատասխան)*<br><br>**3**. 1905 թ. օգոստոսի 1։ (1) Եկեղեցուն վերադարձվում է բռնագրավված գույքը, (2) վերաբացվում են դպրոցները։ |